



# Տեղադրման, շահագործման և տեխսպասարկման ձեռնարկ

EnviZion, BioviZion and PfuZion Valves



**ITT**







# Բովանդակություն

<b>1 Ներածություն և Անվտանգություն</b> .....	<b>2</b>
1.1 Անվտանգության ծանուցման մակարդակներ .....	2
1.2 Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ.....	2
<b>2 Տեղափոխում և պահուստավորում</b> .....	<b>5</b>
2.1 Փականը գործածելու և փաթեթավորումից հանելու ուղեցույց .....	5
2.2 Պահուստավորման, հեռացման և վերադարձի պահանջներ .....	5
<b>3 Ապրանքի նկարագրություն</b> .....	<b>7</b>
3.1 Շարժաբերի նույնականացում.....	7
3.2 Փակոցի նկարագրություն .....	8
3.3 Փականի դիաֆրագմայի նույնականացում .....	10
<b>4 Տեղադրում</b> .....	<b>13</b>
4.1 Փականի և վերնամասային սարքավորումների տեղադրում .....	13
4.2 BioviZion/PfuZion փականի հավաքումը .....	13
4.3 EnviZion փականի հավաքման աշխատանքները.....	16
4.4 Կարգավորեք վերհանման սահմանափակիչը (միայն ձեռքի պտտանիվի օգնությամբ).....	21
<b>5 Շահագործում</b> .....	<b>22</b>
5.1 Փականի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների շահագործում .....	22
<b>6 Տեխսպասարկում</b> .....	<b>23</b>
6.1 Նախագգուշական ցուցումներ.....	23
6.2 Ստուգում .....	23
6.3 Պահանջներ քսայուղման նկատմամբ.....	23
6.4 BioviZion/PfuZion փականի կազմատումը .....	24
6.5 EnviZion փականի հավաքման աշխատանքները.....	24
6.6 Փոխարինեք BioviZion փականի դիաֆրագման .....	25
6.7 Փոխարինեք BioviZion փականի դիաֆրագման .....	26
<b>7 Troubleshooting</b> .....	<b>29</b>
7.1 Անսարքությունների վերացում.....	29
<b>8 Մասերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր</b> .....	<b>31</b>
8.1 Մասերի ցանկ.....	31
<b>9 Certifications</b> .....	<b>32</b>
9.1 Համապատասխանության հայտարարագիր.....	32
9.2 Միավորման հայտարարագիր .....	34

# 1 Ներածություն և Անվտանգություն

## 1.1 Անվտանգության ծանուցման մակարդակներ

### Սահմանումներ

Անվտանգության ծանուցման մակարդակ	Ցուցում
 <b>ՎՏԱՆԳԱՎՈՐ Է.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կհանգեցնի մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 <b>ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կարող է հանգեցնել մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքի
 <b>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.</b>	Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կարող է պատճառել թեթևից միջին աստիճանի մարմնական վնասվածք
 <b>ԷԼԵԿՏՐԱԳՆԱՐՄԱՆ ՎՏԱՆԳ.</b>	Էլեկտրահարման վտանգի հավանականություն, եթե անվտանգության ցուցումները և հրահանգները պատշաճ կերպով պահպանված չեն
<b>ԾԱՆՈՒԹՈՒՄ.</b>	<ul style="list-style-type: none"> <li>Վտանգավոր իրավիճակ, որը չկանխելու դեպքում՝ կարող է առաջացնել անցանկալի հետևանք կամ վիճակ</li> <li>Վիճակ, որը կապված չէ մարմնական վնասվածքի հետ</li> </ul>

## 1.2 Օգտագործողի առողջության և անվտանգության ցուցումներ

### Ընդհանուր նախազգուշական ցուցումներ

Այս ապրանքը նախագծվել և արտադրվել է լավագույն նյութերի օգտագործմամբ և բարձր վարպետությամբ և համապատասխանում է ոլորտում գործող բոլոր չափանիշներին: Այս ապրանքը պետք է օգտագործել միայն ITT ընկերության ցուցումների համաձայն:



### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Փականի սխալ շահագործումը կարող է պատճառել մարմնական վնասվածք կամ վնաս հասցնել գույքին: Ընտրեք ճիշտ նյութերից պատրաստված փականներ և բաղադրիչների և համոզվեք, որ դրանք համապատասխանում են Ձեր աշխատանքային պահանջներին: Այս ապրանքի ոչ ճիշտ կիրառում է հանդիսանում հետևյալը՝ առանց սահմանափակման.
  - Ճնշման կամ ջերմաստիճանի ցուցանիշների գերազանցում
  - Ապրանքի տեխսպասարկման իրականացում առանց համապատասխան պահանջները բավարարելու
  - Ապրանքի օգտագործում այնպիսի նյութերի համար, որոնք անհամատեղելի են նրա կառուցվածքի նյութերի հետ

### Որակավորումներ և փորձարկում

Փականի հավաքման, շահագործման, ստուգման և տեխսպասարկման համար պատասխանատու անձնակազմը պետք է ունենա համապատասխան որակավորում: Շահագործող ընկերությունը պետք է կատարի հետևյալ առաջադրանքները:

- Սահմանել այս սարքավորման հետ աշխատող անձնակազմի բոլոր անդամների պատասխանատվություններն ու կարողությունները:
- Իրականացնել իրահանգավորում և ուսուցում:
- Ապահովել, որ անձնակազմի բոլոր անդամները լիարժեքորեն հասկանան շահագործման ցուցումների բովանդակությունը:

Հրահանգավորում և ուսուցում կարող են իրականացնել ինչպես ITT ընկերությունը, այնպես էլ՝ փականը վաճառող ընկերությունը:



### **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.**

Կալիֆորնիայի օրենք 65 Զաղցկեղ <http://www.P65Warnings.ca.gov>: Ապրանքը պլաստիկը պարունակում է ապակե բրդե մանրաթելեր, որոնք ըստ Կալիֆորնիայի Նահանգի կարող են առաջացնել քաղցկեղ: Ձեռք տալուց հետո լվացեք ձեռքերը:

### **Սույն կանոնները չպահպանելու հետ կապված վտանգներ**

Անվտանգության բոլոր Նախազգուշական ցուցումները չպահպանելու դեպքում կարող է պատահել հետևյալը.

- Մահ կամ լուրջ վնասվածք էլեկտրական, մեխանիկական և քիմիական ազդեցության հետևանքով
- Վնաս շրջակա միջավայրին վնասակար նյութերի արտահոսքի հետևանքով
- Ապրանքի վնասում
- Գույքի վնասում
- Չրկում վնասների դիմաց բոլոր տեսակի բողոքներ ներկայացնելու իրավունքից

### **Շահագործման անվտանգության Նախազգուշական ցուցումներ**

Այս ապրանքը շահագործելիս՝ պետք է ի նկատի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Մի օգտագործեք լծակային սարքեր կամ «խողովակավոր բանալիներ» այս ապրանքները շահագործելու համար:
- Մի թողեք ապրանքի տաք կամ սառը բաղադրիչները առանց ուշադրության, եթե դրանք կարող են վտանգի աղբյուր լինել:
- Մի հեռացրեք շարժական մասերի կոնտակտային պաշտպանիչ միջադիրը, երբ ապրանքը շահագործման մեջ է: Երբեք մի շահագործեք ապրանքը, եթե կոնտակտային միջադիրը տեղադրված չէ:
- Ապրանքից այլ իրեր մի կախեք: Բոլոր տեսակի հարակից պարագաները պետք է ամուր կամ հիմնական ամրակցված լինեն:
- Մի օգտագործեք ապրանքը որպես աստիճան կամ ձեռքի բռնակ:
- Մի ներկեք այս ապրանքի հետ կապված նույնականացման պիտակը, Նախազգուշական նշանները, ցուցումները կամ այլ նշանները:

### **Տեխսպասարկման անվտանգության Նախազգուշական ցուցումներ**

Այս ապրանքի տեխսպասարկումն իրականացնելիս՝ պետք է ի նկատի ունենալ անվտանգության հետևյալ ցուցումները.

- Դուք պետք է ապրանքը մաքրեք աղտոտումներից, եթե այն ենթարկվի վնասակար, օրինակ քիմիական քայքայիչ նյութերի ազդեցությանը:

### **Զթույլատրված մասերի օգտագործում**

Ապրանքի վերակազմավորումը կամ ձևափոխումը թույլատրվում է միայն ITT ընկերության հետ խորհրդակցելուց հետո: ITT ընկերության կողմից թույլատրված գործարանային պահեստամասերը և հարակից մասերը ապահովում են անվտանգություն: ITT ընկերության ոչ գործարանային մասերի օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից: ITT ընկերության մասերը չպետք է օգտագործել ITT ընկերության կողմից չառաքված մասերի հետ, քանի որ նմանատիպ ոչ ճիշտ օգտագործումը կարող է ազատել արտադրողին հետևանքների պատասխանատվությունից:

### **Շահագործում անթույլատրելի եղանակով**

Այս ապրանքի աշխատանքային հուսալիությունը երաշխավորվում է միայն այն դեպքում, եթե այն օգտագործվում է ըստ նշանակության: Նույնականացման պիտակի վրա և տվյալների մասնագրում նշված աշխատանքային սահմանափակումները չի կարելի գերազանցել ոչ մի հանգամանքում: Եթե նույնականացման պիտակը բացակայում է կամ մաշվել է, կապվեք ITT ընկերություններին՝ հատուկ ցուցումներ ստանալու համար:

Մի օգտագործեք «խողովակային ձողեր» ձեռքով շահագործվող փականները շահագործելու համար: Դա կարող է վնասել փականը կամ վնաս պատճառել անձնակազմին:

Մի օգտագործեք լծակավոր սարքեր փակոցի վրա: Դա կարող է վնասել փականը կամ վնաս պատճառել անձնակազմին:

## 2 Տեղափոխում և պահուստավորում

### 2.1 Փականը գործածելու և փաթեթավորումից հանելու ուղեցույց



#### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Այս ապրանքը գործածելիս՝ մշտապես հետևեք պատահարները կանխարգելող գործող ստանդարտներին և կանոնակարգերին:

#### ԾԱՆՈՒՅՈՒՄ.

Փականն առաքվում է ջերմային կոմպենսացիոն համակարգն անջատված վիճակում: Փականին ճնշում տալուց առաջ անհրաժեշտ է հերմետիկ փակել փակոցը, ինչպես նկարագրված է շահագործման ուղեցույցում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [www.engvalves/envizion.html](http://www.engvalves/envizion.html) կամ կապվեք ITT ընկերության հետ 7 17-509-2200 հեռախոսահամարով:

#### Գործածման ցուցումներ

Ապրանքը գործածելիս՝ հետևեք սույն ցուցումներին վնասներից խուսափելու համար.

- Այս ապրանքի հետ վարվեք զգուշորեն:
- Նախքան տեղադրելը պահպանեք ապրանքի պաշտպանիչ թասակները և ծածկերը:

#### Փաթեթավորումը հեռացնելու ցուցումներ

Ապրանքի փաթեթավորումը հեռացնելիս՝ հետևեք սույն ցուցումներին.

1. Ստուգեք, որպեսզի առաքման ժամանակ ապրանքը զերծ լինի վնասվածքներից, կամ բացակայող մասեր չլինեն:
2. Ապրանքի ստացականի և բեռնագրի վրա շնեք բոլոր վնասվածքները և բացակայող մասերը:
3. Մի անցկացրեք էլեկտրական հաղորդալարեր կամ մի բարձրացրեք դրանցով: Դա կարող է խախտել հոսանքատար լարերի անջատիչների կարգաբերումը:

### 2.2 Պահուստավորման, հեռացման և վերադարձի պահանջներ

#### Պահուստավորում

Եթե Դուք ապրանքը չեք տեղադրելու առաքումից անմիջապես հետո, ապա պետք է պահուստավորեք այն հետևյալ կերպ:

- Ապրանքը պահուստավորեք չոր սենյակում, որտեղ ջերմաստիճանը կայուն է:
- Համոզվեք, որ ապրանքները դարսված չեն միմյանց վրա:
- Հավաքված փականները պահուստավորեք ջերմային կոմպենսացիայի անջատված համակարգով, որպեսզի պաշտպանեք դրաֆրագման վնասվելուց:

#### Հեռացում

Այս ապրանքի և հարակից մասերի հեռացումը պետք է իրականացվի դաշնային, նահանգային և տեղական կանոնակարգերի համաձայն:

#### Վերադարձ

Նախքան ապրանքն ընկերությանը վերադարձնելը՝ համոզվեք, որ պահպանված են հետևյալ պահանջները. ITT:

- Դիմեք ITT ապրանքի վերադարձի հետ կապված հատուկ ցուցումների համար:

- Փականը մաքրեք բոլոր տեսակի վնասակար նյութերից:
- Բոլոր տեսակի հեղուկների համար, որոնք կարող են մնալ փականի վրա, լրացրեք Նյութի անվտանգության ձևաթերթը կամ Գործընթացների ձևաթերթը:
- Գործարանից ստացեք վերադարձի թույլտվություն:



# 3 Ապրանքի նկարագրություն

## 3.1 Շարժաբերի նույնականացում

Մոդելի համար

Ծածկագիր	Նկարագրություն
ZH	EnviZion/BioviZion ձեռքի պտտանիվ
ZMB	PfuZion Retrofit Bio-Tek պտտանիվ
ZA1	EnviZion/BioviZion խափանման ժամանակ բացվող չժանգոտող պողպատից շարժաբեր
ZA2	EnviZion/BioviZion խափանման ժամանակ փակվող չժանգոտող պողպատից շարժաբեր
ZA3	EnviZion/BioviZion հետադարձ աշխատող չժանգոտող պողպատից շարժաբեր
ZB1	EnviZion Advantage տեսակի խափանման ժամանակ բացվող շարժաբեր
ZB2	EnviZion Advantage տեսակի խափանման ժամանակ փակվող շարժաբեր
ZB3	EnviZion Advantage տեսակի հետադարձ աշխատող շարժաբեր
ZPB1	PfuZion Retrofit Bio-Tek ACT-FO
ZPB2	PfuZion Retrofit Bio-Tek ACT-FC
ZPB3	PfuZion Retrofit Bio-Tek ACT-DA

EnviZion շարժաբերներ



Նկար 1: EnviZion ձեռքի կապոտ (ZH)



Նկար 2: EnviZion չժանգոտող պողպատից շարժաբեր (ZA)



Նկար 3: EnviZion Advantage տեսակի շարժաբեր (ZB)

**BioviZion շարժաբեր**



**Նկար 4: Ձեռքի BioviZion**



**Նկար 5: Շարժական BioviZion**




**Նկար 6: PfuZion**




**Նկար 7: PfuZion**

**Նույնականացման պիտակ (միայն շարժաբերով)**



**3.2 Փակոցի նկարագրություն**

Ոչ հերմետիկ փակոց



Անվանում	Նկարագրություն
1"	Դրենաժային բացվածք կամ օդափոխման խցան (այլընտրանքային դիզայն)
2"	Սեղմիչ օդակաձև պտուտակ

Սկար 8: Սեղմիչ օդակաձև պտուտակի տեղադրությունը

**ՃԱՆՈՒՅՈՒՄ.**


Սեղմիչ օդակաձև պտուտակը պետք չէ հեռացնել, քանի դեռ կա ներքին տեխսպասարկման անհրաժեշտություն: Օժանդակության համար կապ հաստատեք ITT-ի հետ:

**Չերմետիկ փակոց**




Անվանում	Նկարագրություն
1"	խցափակիչ
2"	Չերմետիկ սեղմիչ օդակաձև պտուտակ

Սկար 9: 0.75 - 2 դյույմանոց՝ խցափակիչով



Սկար 10: EnviZion 0.5 դյույմանոց, հերմետիկ փակոցի պտուտակով և սեղմիչ օդակաձև պահպանիչով



Սկար 11: BioviZion/PFuZion 0.5 դյույմ չափսի, հերմետիկ փակոցի պտուտակով և սեղմիչ օդակաձև պահպանիչով

Անվանում	Նկարագրություն
1"	Չերմետիկ փակոցի պտուտակ
2"	Չերմետիկ սեղմիչ օդակաձև պտուտակ

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**


Սեղմիչ օդակաձև պտուտակը պետք է հեռացնել, քանի դեռ կա ներքին տեխսպասարկման անհրաժեշտություն: Օժանդակության համար կապ հաստատեք ITT-ի հետ:

Չերմետիկ փակոցում սեղմիչ օդակաձև պտուտակը (2) փոխարինված է հերմետիկ փակոցի պտուտակով (1): Դրենաժային անցքը փոխարինված է EnviZion 0.5 դյույմ և BioviZion/PFuZion 0.25-0.5 դյույմ չափսի երկրորդ հերմետիկ պտուտակով կամ 1/8 ստանդարտ խողովակային պարուրակով 0.75 - 2 չափսերի v-աձև խցափակիչով: Պտուտակը կամ խցափակիչը թուլացվել են՝ դիաֆրագմայի պատռվածքն ստուգելու համար:

**EnviZion փակոցի պաշտպանիչ միջադիր**



Նկար 12: Փակոցի պաշտպանիչ միջադիր



Նկար 13: Փակոցի պաշտպանիչ միջադիրի տեսքը շեղակի կտրվածքով

Անվանում	Նկարագրություն
1"	EnviZion փակոցի պաշտպանիչ միջադիրի գլխիկ
2"	Չերմետիկ

**3.3 Փակակի դիաֆրագմայի նույնականացում**

**Դիաֆրագմայի պիտակի ծածկագիր**

Դիաֆրագմայի համար օգտագործված բոլոր նյութերին և դրանց ֆիզիկական հատկություններին կարելի է ծանոթանալ ըստ խմբաբանակի՝ դիաֆրագմայի պիտակին մամլված մշտական ծածկագրի միջոցով: Մամլվածքի ամսաթիվը, դիաֆրագմայի կարգը և չափսը թույլ են տալիս հետևել խմբաբանակի համար գործարանային գրանցված տվյալներին:



Նկար 14: EnviZion հենաբարձիկ




Նկար 15: BioviZion/PfuZion հենաբարձիկ

Անվանում	Նկարագրություն
1	Մամլվածքի համար
2	Բաղադրություն
3	Չափ կամ BV = BioviZion, Pf = PfuZion
4	Մատակարար
5	Ամսաթվի ծածկագիր (ամիս և տարի)



Նկար 16: EnviZion պոլիտետրաֆլուորէթիլենային դիաֆրագմաներ



Նկար 17: BioviZion/PfuZion պոլիտետրաֆլուորէթիլենային դիաֆրագմաներ

Անվանում	Նկարագրություն
1	Մատակարար
2	Ամիս
3	Նյութ

Անվանում	Նկարագրություն
4	Տարի

**EHEDG հավաստագրված նյութերի կիրառություններ**

EHEDG հավաստագրված փականները, որոշ հիգիենիկ սեղմաների միացումներ, ինչպես նաև այս միացումների կիպարարները մաքրության պահպանման տեսանկյունից գնահատվել և ընդունվել են EHEDG-ի կողմից: Դրանք նշված են EHEDG-ի ներկայացրած եզրակացության մեջ <https://www.ehedg.org/guidelines/free-documents/> Համաձայն EHEDG ստանդարտների, միայն այդ միացումներով և կիպարարներով փականներն են համարվում մաքրվող:

## 4 Տեղադրում

### 4.1 Փականի և վերնամասային սարքավորումների տեղադրում

#### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

Կափույրի չափսը և կոնֆիգուրացիան կարող է սահմանափակել իրական աշխատանքային ճնշումը: Ճնշման սահմանափակումների վերաբերյալ տեղեկացե՛ք Pure-Flo կատալոգից: Վակուումում աշխատանքի վերաբերյալ տեղեկացե՛ք գործարանից կամ ինժեներական կատալոգից:

1. Եթե Դուք ունեք եռակցված փական, ապա հաշվի առե՛ք հետևյալը.

Եթե Դուք եռակցում եք ...	Ապա ...
Ձեռքով,	Հանե՛ք վերնամասի սարքավորումները:
Ըստ սանդղակի 10 կամ ավելի ծանր խողովակով խողովակաշարում	Հանե՛ք վերնամասի սարքավորումները:
Ըստ սանդղակի 5 կամ ավելի թեթև խողովակով խողովակաշարում	Կարող եք եռակցել ավտոմատ սարքավորմամբ: Նախքան եռակցելը. <ol style="list-style-type: none"> <li>1. Հանե՛ք վերնամասի սարքավորումները (ըստ Նախընտրության):</li> <li>2. Տեղադրված թողնելու դեպքում փականի դիրքն ուղղե՛ք բաց դիրքի վրա:</li> <li>3. Լավ մաքրե՛ք փականը իներտ գազով:</li> </ol>

#### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

Փականի իրանի տեղադրման համար անհրաժեշտ է կատարել միայն հավաստագրված եռակցման աշխատանքներ:

2. Տեղադրե՛ք փականը:

#### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

Թողե՛ք, որ եռակցված փականները նախքան գործածումը սառչեն:

#### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

Հորիզոնական խողովակային համակարգերի աշխատանքի համար փականի իրանը տեղադրե՛ք հեղուկահեռացումն ապահովող օպտիմալ անկյան տակ՝ մեխանիկական (դրոշմված) արտահոսքի դրենաժային կետերի վրա:

3. Փականը շրջանառե՛ք երկուսից երեք անգամ՝ համոզվելու համար, որ այն սահուն աշխատում է:

### 4.2 BioviZion/PfuZion փականի հավաքումը

#### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

(BioviZion միայն) Փականն առաքվում է ջերմային կոմպենսացիոն համակարգն անջատված վիճակում: Փականին ճնշում տալուց առաջ անհրաժեշտ է հերմետիկ փակել փակոցը, ինչպես նկարագրված է շահագործման ուղեցույցում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք [www.engvalves/envizion.html](http://www.engvalves/envizion.html) կամ կապվե՛ք ITT ընկերության հետ 717-509-2200 հեռախոսահամարով:

#### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

Սկավառակի մարմինը չի պտտվում:


1. Փականի իրանը ֆիքսեք ուղղահայաց դիրքով կամ խողովակի ներսում:
2. Ստուգեք, որ փականի իրանի հերմետիկի մակերեսը թերություններ չունենա, իսկ վնասված լինելու դեպքում նորոգեք իրանը նախքան օգտագործելը:
3. Մասամբ բացեք փականն այնքան, մինչև դիաֆրագմայի կենտրոնը սկսի շրջվել:
4. Համոզվեք, որ դիաֆրագմայի անցքերը ճիշտ կերպով համընկնում են փակոցի ակոսներին:
5. Դիաֆրագման և փակոցը տեղադրեք փականի իրանի վերևում՝ պահպանելով դիաֆրագմայի դիրքը:
6. Տեսողականորեն հավասարեցրեք BioviZion/PfuZion կափարիչի կեռիկները փականի մարմնի զամասեղների հետ:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Թույլ մի տվեք, որ դիաֆրագմայի կիպարարի մակերեսները հպվեն փականի իրանի բոլորներին:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

- BioviZion/PfuZion չժանգոտող պողպատից հաղորդակները նախատեսված են մշտական օգտագործման համար և չպետք է փանդվեն:
- BioviZion/PfuZion խափանման ժամանակ փակվող (ZA2 ծածկագրեր) շարժաբեռները փականի իրանից հանելու կամ տեղադրելու ժամանակ սեղմված օդ է անհրաժեշտ:
- BioviZion/PfuZion ձեռքի անիվի համար անհրաժեշտ է մասնակի բացել այն, որպեսզի տեղադրվի կամ հանվի հաղորդակը կլապանային կորպուսից:



Անվանում	Նկարագրություն
1	Լայն անցուղի բոլտերի համար
2	Փականի իրանի բոլտեր

**Նկար 18: Իրանի հարմարեցում փակոցին**

7. Փակոցը շարժեք փականի իրանի նկատմամբ՝ մինչև բոլտերը մտնեն փակոցի չորս ակոսիկների մեջ:



**ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ.**

Տեղադրման ժամանակ ձեռքերը պահեք հիգիենիկ սեղմակներից վերև, որպեսզի խուսափեք մատները ճզմվելուց:





Անվանում	Նկարագրություն
1	Ճզմման կետեր

**Նկար 19:** Իրանը փակոցին միացնելու միակցիչ - ճզմման հավանական կետեր



Անվանում	Նկարագրություն
1	Դիաֆրագման ընկած է փակոցի խորափոսային հատվածում

**Նկար 20:** Դիաֆրագմայի անցքի կարգավորում

8. Պտտեք փակոցը ժամացույցի սլաքի ուղղությամբ մինչև վերջ:



**Նկար 21: Մոնտաժման և պտտման դիրքեր**

- 9. Կափարիչը պտտեք ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև բոլորտերն ամուր հագնեն փակոցին:
- 10. Ստուգեք փակոցի, իրանի, հենաբարձիկի և դիաֆրագմայի ուղղությունը՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանեցված են: Անհրաժեշտության դեպքում թուլացրեք կափարիչը և նախքան ձգելը՝ կրկին ընտրեք բաղադրիչների ուղղությունները:
- 11.
  - a) BioviZion համար. ձգեք կափարիչը ձեռքով ժամացույցի սլաքի ուղղությամբ, մինչև կարմիր ցուցիչ նշանն այլևս չերևա, և պտտող մոմենտի պահանջն արագորեն մեծանա:
  - b) PfuZion-ի գլխարկի կափարիչը խստացրեք 1 5/16 դյույմ ոլորող մոմենտ ստեղծելու բանալին մինչև (95-100 դյույմ/10,7-11,3 կ.մ): Կրկին մի ձգեք:

---

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Կափարիչը ձգելու ժամանակ ձեռքի պտտանիվը պահեք մասամբ բաց դիրքում:

---

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Մի գործադրեք լրացուցիչ ուժ կամ մի օգտագործեք լծակային գործիքներ՝ BioviZion կափարիչը կամ պտտանիվը պտտելու համար:

---

- 12. Ձգեք կափարիչի պտուտակը մինչև վերջ: Եթե անհրաժեշտ է, կափարիչը խոչընդոտ հանդիպելու դեպքում, կարելի է փոքր-ինչ թեթև ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:

---

## 4.3 EnviZion փականի հավաքման աշխատանքները

---



**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.**

Փականն առաքվում է ջերմային կոմպենսացիոն համակարգն անջատված վիճակում: Փականին ճնշում տալուց առաջ անհրաժեշտ է հերմետիկ փակել փակոցը, ինչպես նկարագրված է շահագործման ուղեցույցում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [www.engvalves/envizion.html](http://www.engvalves/envizion.html) կամ կապվեք ITT ընկերության հետ 717-509-2200 հեռախոսահամարով:

---



**ՉԳՈՒՇԱՑՈՒՄ.**

PFuZion թաղանթը և անվտանգության բարձիկը պետք է փոխարինվեն ամեն անգամ, երբ տեղադրեք վերին սարքը:



**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.**

Օդանցքների ուղղության որոշումից առաջ, խափանման ժամանակ փակվող շարժաբեռների համար անհրաժեշտ է սեղմված օդ՝ մինչև շարժաբեռը պտտվելով կարողանա հավաքի: Խափանման ժամանակ բացվող և հետադարձ աշխատող շարժաբեռների համար անհրաժեշտ է սեղմված օդ հեռացվելու համար՝ մինչև շարժաբեռը պտտվելով կարողանա հավաքի:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

90 ֆունտ մեկ բառակուսի դյույմում օդի ճնշումը խորհուրդ է տրվում անսարքությունների դիմացկուն կրիչների համար: Անխափան բացման և ուղղակի գործողության կրիչների համար համապատասխան օդի ճնշումը որոշելու համար դիմեք EnviZion գրքույկի աղյուսակներին: Աղյուսակներում նշվածներից բարձր օդի ճնշման կիրառումը կարող է նվազեցնել փականի մեմբրանի ծառայության ժամկետը:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

- EnviZion տիպի շարժաբեռները տեխսպասարկում չեն պահանջում, դրանք հնարավոր չէ կազմատել:
- EnviZion խափանման ժամանակ փակվող (ZA2, ZB2 ծածկագրեր) շարժաբեռները փականի իրանից հանելու կամ տեղադրելու ժամանակ սեղմված օդ է անհրաժեշտ:
- Գործիքից օդի հեռացումը անհրաժեշտ է կրկնակի գործող կրիչները և վթարային բաց կրիչները հեռացնելու համար:

1. Եթե փականը համալրված է EnviZion պաշտպանիչ միջադիրով, ապա.
  - a) Դեռացրեք փակոցի EnviZion պաշտպանիչ միջադիրի թասակը, պտտելով ժամացույցի սլաքի ուղղությամբ, որպեսզի տեսնեք փակոցի Ֆիքսող բոլտը:
  - b) Փակոցի տեղադրումից հետո կրկին տեղադրեք EnviZion պաշտպանիչ միջադիրի կիպարարը և թասակը ստորև նշված մեթոդներից որևէ մեկով.

Մեթոդ	Քայլեր
Մեթոդ 1	Ձգեք հերմետիկ թասակը՝ գործադրելով 4-5 դյույմ պտտող մոմենտ ժամացույցի սլաքի ուղղությամբ:
Մեթոդ 2	<ul style="list-style-type: none"> <li>• Ձեռքով ձգեք թասակը միջին ուժով՝ օգտվելով 9/16 դյույմ տրամագծով վարդակից:</li> </ul>

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

Կիպարար տափօղակը մաքրեք կեղտից:

2. Փականի իրանը Ֆիքսեք ուղղահայաց դիրքով կամ խողովակի ներսում:
3. Ստուգեք, որ փականի իրանի հերմետիկի մակերեսը թերություններ չունենա, իսկ վնասված լինելու դեպքում նորոգեք իրանը նախքան օգտագործելը:
4. Մաս-մաս բացեք փականը:

Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում	ապա
Ձեռքով	Կատարեք պտտանվի մեկ պտույտ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:

<b>Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում</b>	<b>ապա</b>
Շարժաբերով	Չսպասային շարժաբերով գործի դրվող փականների համար շարժաբերին տվեք օդ, որպեսզի կարողանաք իլը տեղադրեք կիսով չափ բաց դիրքում:

5. Համոզվեք, որ անվտանգության բարձիկների ներդիրները ճիշտ կերպով համընկնում են փակոցի ակոսներին:
6. Դիաֆրագման և փակոցը տեղադրեք փականի իրանի վերևում՝ պահպանելով դիաֆրագմայի դիրքը:
7. Փակոցի ամրացման կոճգամները տեսողական հարմարեցրեք փականի իրանի բոլորներին:

**ՇԱՆՈՒՅՈՒՄ.**

Թույլ մի տվեք, որ դիաֆրագմայի կիպարարի մակերեսները հպվեն փականի իրանի բոլորներին:



Անվանում	Նկարագրություն
1	Տեղադրման կոճգամներ
2	Փականի իրանի բոլորներ

**Նկար 22: Իրանի հարմարեցում փակոցին**

8. Փակոցը շարժեք փականի իրանի նկատմամբ՝ մինչև բոլորները մտնեն փակոցի չորս ակոսիկների մեջ:



**ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ.**

Տեղադրման ժամանակ ձեռքերը պահեք հիգիենիկ սեղմակներից վերև, որպեսզի խուսափեք մատները ճզմվելուց:



Անվանում	Նկարագրություն
1	Ճզմման կետեր

**Նկար 23:** Իրանը փակոցին միացնելու միակցիչ - ճզմման հավանական կետեր



Անվանում	Նկարագրություն
1	Դիաֆրագման ընկած է խորափոսային հատվածում:

**Նկար 24:** Դիաֆրագմայի անցքի կարգավորում

9. Պտտեք փակոցը ժամացույցի սլաքի ուղղությամբ մինչև վերջ:



**Նկար 25:** Մոնտաժման և պտտման դիրքեր

10. Թուլացրեք սևեռիչ կոճգամն այնպես, որ այն ազատորեն շարժվի կափարիչի պտտվելու ժամանակ: Կլսվի «կտտոցի» նման ձայն, երբ կոճգամը հագնի փակոցի արգելակային մեխանիզմին:



**Նկար 26:** Սևեռիչ կոճգամի դիրքեր



Անվանում	Նկարագրություն
1	Սևեռիչ կոճգամ (թուլացված)
2	Սևեռիչ կոճգամ ձգված (կարող է ֆիքսվել այս դիրքում կոճգամի 90 աստիճան պտտված դիրքով)

11. Կափարիչը պտտեք ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև բոլորն ամուր հազնեն փակոցին: Եթե կափարիչը չպտտվի, ապա.
  - a) Բարձրացրեք կափարիչը՝ ուժգին սեղմելով ժամացույցի սլաքի ուղղությամբ: Սա կհաղթահարի ներքին ֆիքսման ֆունկցիային, որը գործի է դրվում, երբ կափարիչի վրա ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ գործադրվում է չափից ավել ուժ:
12. Ստուգեք փակոցի, իրանի, հենաբարձիկի և դիաֆրագմայի ուղղությունը՝ համոզվելու համար, որ դրանք համապատասխանեցված են: Անհրաժեշտության դեպքում թուլացրեք կափարիչը (սևեռիչ կոճգամը դեպի դուրս դիրքով ֆիքսելուց հետո) և նախքան ձգելը՝ կրկին ընտրեք բաղադրիչների ուղղությունները:
13. Համոզվեք, որ սևեռիչ կոճգամը թուլացված դիրքով է (կափարիչը պտտվելու դեպքում լսվում է կտտոց):
14. Ձգեք կափարիչը: Հատուկ ցուցումների համար տե՛ս ներքևի աղյուսակը:

Եթե փականը աշխատեցվում է	ապա
Ձեռքով կամ 0.50" շարժաբերով,	Ձգեք կափարիչը ձեռքով ժամացույցի սլաքի ուղղությամբ, մինչև կարմիր ցուցիչ նշանն այլևս չերևա, և պտտող մոմենտի պահանջն արագորեն մեծանա:
0.75-2.00"	Կափարիչը ձեռքով պտտեք ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև սևեռիչ կոճգամն ամբողջությամբ նստի դրենաժային անցքի դիրքում:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Կափարիչը ձգելու ժամանակ ձեռքի պտտանիվը պահեք մասամբ բաց դիրքում:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Մի գործադրեք լրացուցիչ ուժ կամ մի օգտագործեք լծակային գործիքներ՝ կափարիչը կամ պտտանիվը պտտելու համար:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Սևեռիչ կոճգամը, կափարիչը ձգվելու դեպքում, կսևեռվի:



**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.**

Համոզվեք, որ սևեռիչ կոճգամը դեպի ներս նայող դիրքով է: Սա կկանխի փականի արտահոսքերը, ինչպես նաև թույլ չի տա, որ կափարիչը թուլանա:



**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.**

Օդանցքների ուղղության որոշումից առաջ. խափանման ժամանակ փակվող շարժաբերների համար անհրաժեշտ է սեղմված օդ՝ մինչև շարժաբերը պտտվելով կարողանա հավաքի: խափանման ժամանակ բացվող և հետադարձ աշխատող շարժաբերների համար անհրաժեշտ է սեղմված օդ հեռացվելու համար՝ մինչև շարժաբերը պտտվելով կարողանա հավաքի:

15. Ընտրեք օդանցքների ուղղությունը խողովակների համար:

Եթե փականն ունի	ապա
խափանման ժամանակ փակվող շարժաբեր,	Անհրաժեշտ է սեղմված օդ՝ մինչև շարժաբերը պտտվելով կարողանա հավաքի:
խափանման ժամանակ բացվող կամ հետադարձ աշխատող շարժաբեր	Անհրաժեշտ է հեռացնել սեղմված օդը՝ մինչև շարժաբերը պտտվելով կարողանա հավաքի:

## 4.4 Կարգավորե՛ք վերհանման սահմանափակիչը (միայն ձեռքի պտտանիվի օգնությամբ)

1. Փականի իրանը ֆիքսե՛ք ուղղահայաց դիրքով:
2. Աշխատանքային վիճակի բերե՛ք փորձարկային հարմարանքը:
  - a) Փականի մի կողմին մատակարարե՛ք համակարգի ճնշմանը հավասար օդի ճնշում:
  - b) Փակե՛ք փականի մյուս կողմը և տեղադրե՛ք ռետինե օդահան կափույր կամ պլաստիկ խողովակ:
  - c) Խողովակը պահե՛ք ջրով լի տարայի մեջ:
3. Թույլ ձգե՛ք ձեռքի պտտանիվը:
4. Պտտե՛ք ձեռքի պտտանիվի պտուտակը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև պտտանիվը հնարավոր լինի հանել:
5. Հանե՛ք ձեռքի պտտանիվը:
6. Պտտե՛ք ձեռքի պտտանիվի պտուտակը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ այնքան, մինչև պտուտակը հնարավոր լինի հանել քառակուսի խոռոչից:
7. Փոխարինե՛ք ձեռքի պտտանիվը: Պտտե՛ք և սեղմե՛ք պտտանիվը դեպի ներքև այնքան, մինչև հասնի սռնակին և դեղին ցուցիչ նշանն այլևս չերևա:
8. Ձգե՛ք ձեռքի պտտանիվը ժամացույցի սլաքի ուղղությամբ այնքան, մինչև փորձարկային հարմարանքից դադարի արտահոսքը:
 

Օդի պղպջակները ցույց են տալիս, որ կա արտահոսք:
9. Պտտե՛ք ձեռքի պտտանիվը լրացուցիչ 1/8 պտույտի չափով՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ:
10. Պտտանիվը սեղմե՛ք դեպի ներքև այնքան, մինչև

Եթե փականը աշխատեցվում է	ապա
0,5 դյույմի EnviZion կամ 0,25-0,5 BioviZion	Ձեռքի պտտանիվը կկանգնի ներքին եզրագծի վրա, որը հնարավոր չէ տեսնել, իսկ դեղին ցուցիչ նշանն այլևս չի երևա:
0,75- 2 դյույմ	ձեռքի պտտանիվը նստի կափարիչի վրա

11. Ձգե՛ք ձեռքի պտտանիվի պտուտակը ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ թույլ ներքև հրելով ձեռքի պտտանիվը:
 

Պտուտակը մտցնելու համար կարող եք բարձրացնել ձեռքի պտտանիվը:

## 5 Շահագործում

### 5.1 Փականի իրանից մինչև շարժաբերը տեղադրված մեխանիզմների շահագործում

Փականը փակված է պտտանվի ժամացույցի սլաքի ուղղությամբ կատարված պտույտներով:

Փականի չափս		Առանցքածողի տեղաշարժ		Ձեռքի անկվի պտույտների քանակը
դյույմային ձևաչափ	անվանական տրամագիծ	դյույմային ձևաչափ	սմ	
0,25-0,50 (BioviZion)	Տվյալ չկա	0,16	4,1	2,9
0,25-0,50 (PFuZion)	Տվյալ չկա	0,16	4,1	2,9
0,50 (EnviZion)	15	0,25	6,4	4,5
0,75	20	0,45	11,4	3,6
1,00	25	0,45	11,4	3,6
1,50	40	0,75	19	4,2
2,00 (EnviZion)	50	1,00	25,4	6,0
2,00 (EnviZion Advantage)	50	0,85	21,6	Տվյալ չկա



## 6 Տեխսպասարկում

### 6.1 Նախազգուշական ցուցումներ



#### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ.

- Բոլոր գործողությունները պետք է իրականացվեն փորձառու անձնակազմի կողմից:
- Եթե աշխատանքային հեղուկը վտանգավոր է ջերմային տեսանկյունից (տաք է կամ սառը) կամ քայքայիչ է, ձեռնարկեք լրացուցիչ պաշտպանիչ միջոցառումներ: Գործածեք անվտանգության համապատասխան միջոցներ և եղեք պատրաստ աշխատանքային նյութի արտահոսքը կառավարելու համար:
- Մշտապես կրեք պաշտպանիչ հագուստ և միջոցներ աչքերը, երեսը, ձեռքերը, մաշկը և թոքերը համակարգի հեղուկի պաշտպանելու համար:

### 6.2 Ստուգում

Ստուգման հատված	Ինչ ստուգել	Գործողություն խնդիր հայտնաբերելու դեպքում
Փականի արտաքին մասեր	Գերմաշվածություն կամ կոռոզիա	<ul style="list-style-type: none"> <li>• Փոխարինեք վասված մասերը</li> <li>• Դիմեք ITT ընկերությանը փոխարինող մասեր ձեռք բերելու կամ հատուկ ցուցումներ ստանալու համար</li> </ul>
Ոչ հերմետիկ փակոց	Ջեղուկի արտահոսք դրենաժային անցքից	Փականի դիաֆրագմայի փոխարինում
Ջերմետիկ փակոց	Ջեղուկի արտահոսք խցափակիչից Ստուգելու համար թուլացրեք v-աձև ակոսի խցափակիչը (0.75-2 դյույմ) կամ հերմետիկացման պտուտակը (0.50 դյույմ EnviZion կամ 0.25-.50 դյույմ BioviZion/PFuZion) 2-3 պտույտով	Փականի դիաֆրագմայի փոխարինում
Փականի իրանից մինչև շարժաբեր տեղադրված մեխանիզմներ	Սռնակի լուվելը, ավելորդ աղմուկ կամ քսայուղի չորացում	Մեխանիկական - Քսայուղով պատել փականի իրանից մինչև շարժաբեր տեղադրված մեխանիզմները  Շարժաբերով աշխատող - Փոխել շարժաբերը

### 6.3 Պահանջներ քսայուղման նկատմամբ

#### Քսայուղման գրաֆիկ

Կրկին քսայուղելուց առաջ մաքրեք հին քսայուղի մնացորդները: Ամեն անգամ փականի իրանից մինչև շարժաբեր տեղադրված մեխանիզմները քանդելիս քսայուղով պատեք սռնակը, օ-աձև օղակները և հավող մակերեսները:

#### Ընդունելի քսայուղեր

Բրենդ	Քսայուղի տեսակ
Շեվրոն	FM ALC EP 2 (համապատասխանում է FDA-ի պահանջներին)
Ֆուբս	Cassida FM CSC EP2 (NSF H1 Բողոք)
Ֆուբս	Cassida GTS 2 NSF H1 բողոք

## 6.4 BioviZion/PfuZion փականի կազմատումը



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Մինչ փականի կազմատումը ապահովեք, որ ողջ ճնշումը խողովակաշարում հանված լինի. իսկ ջերմաստիճանը մոտ լինի շրջակա միջավայրի ջերմաստիճանին:



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Տաք մակերեսները կարող են այրվածքներ առաջացնել:

1. Փականը ֆիքսեք ուղղահայաց դիրքով:
2. Մաս-մաս բացեք փականը:

Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում	ապա
Ձեռքով	Կատարեք պտտանվի մեկ պտույտ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
Շարժաբերով	Բերեք տնակը մասամբ բաց դիրքի: Կախված շարժաբերի գործողության ռեժիմից՝ այստեղ կարող է պահանջվել շարժաբերի համար նախատեսված սեղմված օդի ճնշում:

3. Թուլացրեք կափարիչի պտուտակը՝ թույլ տալով կափարիչին պտտվել ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
4. Պտտեք կափարիչը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ մինչև վերջ:

### ԾԱՆՈՒԹՈՒՄ.

Վերջին հասնելուն պես, կափարիչի վրա ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ լրացուցիչ ուժ մի գործադրեք:

5. Պտտեք փակոցի հավաքվածքը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ փականի մարմնից մոտ 16 °-ի չափով, մինչև բոլտերը լրիվ կդադարեն պտտվել:
6. Փականի իրանից բարձրացրեք կափարիչի սարքավորումները:

## 6.5 EnviZion փականի հավաքման աշխատանքները



### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

Մինչ փականի կազմատումը ապահովեք, որ ողջ ճնշումը խողովակաշարում հանված լինի. իսկ ջերմաստիճանը մոտ լինի շրջակա միջավայրի ջերմաստիճանին:

1. Փականի իրանը ֆիքսեք ուղղահայաց դիրքով:
2. Մաս-մաս բացեք փականը:

Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում	ապա
ձեռքով,	Կատարեք պտտանվի մեկ պտույտ ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ:
շարժաբերով,	Բերեք տնակը մասամբ բաց դիրքի:

3. Թույլ պտտեք կափարիչն այնպես, որպեսզի ապահովեք սևեռիչ կոճգամի ազատ շարժումը:
4. Զաշեք սևեռիչ կոճգամը, պտտեք այն 90 ° և բաց թողեք: Եթե սևեռիչ կոճգամը չպտտվի, ապա պտտեք կափարիչն այնպես, որպեսզի ապահովեք սևեռիչ կոճգամի ազատ շարժումը:  
Սա կպահի սևեռիչ կոճգամը ձգված դիրքում:
5. Պտտեք կափարիչը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ մինչև վերջ:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Վերջին հասնելուն պես, կափարիչի վրա ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ լրացուցիչ ուժ մի գործադրեք:

- Պտտեք փակոցի հավաքվածքը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ՝ փականի իրանից մոտ 20°-ի չափով, մինչև բոլորը լրիվ կդադարեն պտտվել:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.**

Տաք մակերեսները կարող են այրվածքներ առաջացնել:

- Փականի իրանից բարձրացրեք վերնամասի սարքավորումները:

## 6.6 Փոխարինեք BioviZion փականի դիաֆրագման

- Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տես [6.4 BioviZion/PfuZion փականի կազմատումը on page 24](#):
- Ֆիքսեք փակոցը հակառակ դիրքում:
- Դիրքավորեք արմատուրան փակ դիրքով՝ ձգելով կլապանի լիստեղ:
- Բարձրացրեք հենաբարձիկի եզրերն այնպես, որ անջատեք ճնշակի օղակից:
- Դրեք դիաֆրագման 90°-ի վրա՝ ցանկացած դիրքով՝ կոմպրեսորին չդիպչելու համար:
- Հանեք դիաֆրագման և հենաբարձիկը փակոցի վրայից:
- Նոր դիաֆրագմա և հենաբարձիկ տեղադրեք:


**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Ստուգեք դիաֆրագմայի հերմետիկի մակերևույթը և մի օգտագործեք այն, եթե հերմետիկի մակերևույթը վնասված է:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Մինչ տեղադրելը ստուգեք դիաֆրագման՝ մաքրելով այն կողմնակի այլ նյութերից: Մաքրել անհրաժեշտության դեպքում:

- Սեղմեք ճնշակի օղակն (1) այնպես, որ այն նստի փակոցի վրա:
- Հենաբարձիկն (3) ուղղեք դիաֆրագմայի բոլորի (4) կենտրոնին համապատասխան:
- Ուղղորդեք դիաֆրագման այնպես, որպեսզի նրա կարճ անցքերի (5) կենտրոնական առանցքը համընկնի ճնշակի երկար առանցքի հետ:



- Դիաֆրագման տեղադրեք ճնշակի մեջ:



**Նկար 27: Դիաֆրագմայի տեղադրումը**

12. Պտտեք դիաֆրագման 90°-ով, մինչև երկար անցքերը կհամընկնեն փակոցի բարակ խորափոսերին:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

Դիաֆրագման պետք է նվազագույն դիմադրությամբ ազատ շրջվի: Եթե դիմադրություն է զգացվում, հակառակ տեղադրեք դիաֆրագման և հեռացրեք դիաֆրագման ճնշակի անցքից: Ստուգեք, որ սեղմիչ օղակաձև մեխանիզմի և փակոցի կցաշուրթերը համընկնեն և ճնշակն անջատված լինի:

13. Ապահով տեղակայում ունենալու համար թույլ քաշեք դիաֆրագման՝ հեռացնելով այն ճնշակից:
14. Դիաֆրագման դիրքավորեք այնպես, որ կցաշուրթը կցվի փակոցին, չդեֆորմացվի և անցքերը ճիշտ համընկնեն փակոցի ակոսներին: Պտտեք ձեռքի պտտանիվը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ, որպեսզի տեղադրեք դիաֆրագման:
15. Հենաբարձիկը չպետք է շեղված լինի կենտրոնական առանցքից:
16. Փականի իրանից բարձրացրեք վերնամասի սարքավորումները:  
Մանրամասն տեղեկատվության համար տես [4.2 BioviZion/PfuZion փականի հավաքումը on page 13](#)

**6.7 Փոխարինեք BioviZion փականի դիաֆրագման**

1. Կազմատեք փականը:  
Մանրամասն տեղեկատվության համար տես [6.5 EnviZion փականի հավաքման աշխատանքները on page 24](#):
2. Ֆիքսեք փակոցը հակառակ դիրքում:
3. Փակեք փականը:

Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում	ապա
ձեռքով,	Պտտանիվը պտտացրեք ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ մինչև փակ դիրքը:
շարժաբերով,	Լրիվ ձգեք տնակը՝ մինչև տեղաշարժման առավելագույն դիրքը: Կախված շարժաբերի գործողության ռեժիմից՝ այստեղ կարող է պահանջվել շարժաբերի համար նախատեսված սեղմված օդի ճնշման առկայություն:

4. Բարձրացրեք հենաբարձիկի եզրերն այնպես, որ անջատեք ճնշակի օղակից:
5. Պտտեք դիաֆրագման և հենաբարձիկի մեխանիզմը 90°-ով՝ որևէ ուղղությամբ:
6. Հանեք դիաֆրագման և հենաբարձիկի մեխանիզմը փակոցի վրայից:

7. Նոր դիաֆրագմա տեղադրեք:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

Ստուգեք դիաֆրագմայի հերմետիկի մակերևույթը և մի օգտագործեք այն, եթե հերմետիկի մակերևույթը վնասված է:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

Մինչ տեղադրելը ստուգեք դիաֆրագման՝ մաքրելով այն կողմնակի այլ նյութերից:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

Համոզվեք, որ հենաբարձիկի թևիկները ապահով անցկացվեն դիաֆրագմայի միջով:

- 8. Սեղմեք ճնշակի օղակն այնպես, որ այն նստի փակոցի վրա:
- 9. Տեղակայեք ճնշակը:


Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում	ապա
ձեռքով,	Պտտեք ձեռքի պտտանիվը մինչև ճնշակի ծայրերը միակցվեն փակոցին:
շարժաբերով,	Լրիվ ձգեք սռնակը՝ մինչև տեղաշարժման առավելագույն դիրքը: Կախված շարժաբերի գործողության ռեժիմից՝ այստեղ կարող է պահանջվել շարժաբերի համար նախատեսված սեղմված օդի ճնշման առկայություն:

- 10. Ուղղորդեք դիաֆրագման այնպես, որպեսզի նրա անցքերի կենտրոնական առանցքը համընկնի ճնշակի երկար առանցքի հետ:


**ԾԱՆՈՒՑՈՒՄ.**

Հենաբարձիկի թևիկները պետք է մտցնել դիաֆրագմայի միջով՝ մինչ տեղադրման աշխատանքները սկսելը

**Աղյուսակ 1:**



- 11. Դիաֆրագման տեղադրեք ճնշակի մեջ:



Դիաֆրագմայի տեղադրումը

**Նկար 28: Դիաֆրագմայի տեղադրումը**

12. Պտտեք դիաֆրագման 90°-ով, մինչև հենաբարձիկի անցքերը կհամընկնեն փակոցի խորափոսերին:

**ԾԱՆՈՒԹՈՒՄ.**

Դիաֆրագման պետք է նվազագույն դիմադրությամբ ազատ շրջվի: Եթե դիմադրություն է զգացվում, հակառակ տեղադրեք դիաֆրագման և հեռացրեք դիաֆրագման ճնշակի անցքից: Ստուգեք, որ սեղմիչ օղակածև մեխանիզմի և փակոցի կցաշուրթերը համընկնեն: Տեղադրեք փոքրիկ պիտակը EnviZion նշանի կողմում այնպես, որ կրկին հավաքման դեպքում ուղղությունը պահպանվի:

13. Ապահով տեղակայում ունենալու համար թույլ քաշեք դիաֆրագման՝ հեռացնելով այն ճնշակից:
14. Դիաֆրագման դիրքավորեք այնպես, որ կցաշուրթը կցվի փակոցին, չդեֆորմացվի և հենաբարձիկի անցքերը ճիշտ համընկնեն փակոցի ակոսներին:

Եթե փականի վերին հատվածի սարքավորումները գործի են դրվում	ապա
ձեռքով,	Պտտեք ձեռքի պտտանիվը ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ, որպեսզի տեղադրեք դիաֆրագման:
շարժաբերով,	Կախված շարժաբերի գործողության ռեժիմից՝ այստեղ կարող է պահանջվել շարժաբերի համար նախատեսված սեղմված օդի ճնշման առկայություն:

15. Փականի իրանից բարձրացրեք վերնամասի սարքավորումները: Մանրամասն տեղեկատվության համար տես [4.3 EnviZion փականի հավաքման աշխատանքները on page 16](#)

# 7 Troubleshooting

## 7.1 Անսարքությունների վերացում

Խնդիր	Պատճառ	Կարգավորում
Փակոցը չի տեղադրվում բոլորի վրա	Ճնշակի օդակի լայնացած է: Եթե EnviZion վերնամասի սարքավորումները տեղադրված չեն իրանի վրա, փակոցի կափարիչը պտտվելիս կարող էք վնասել սեղմման օդակը՝ լայնացնելով այն. սա կարող է խոչընդոտել նաև փակոցի ճշգրիտ տեղադրման աշխատանքներին:	Փակոցի կափարիչը պտտեք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ, իսկ ճնշակի օդակը՝ վերնամասի սարքավորումների փակոցի կցաշուրթերի հետ միասին, սեղմեք ձեռքով ներքև:
Շարժաբերը տեղաշարժվում է շահագործման ընթացքում	Տեղաշարժվելը նախագծված հատուկ ֆունկցիա է, որով հնարավոր է դարձել պտտել շարժաբերը 360 աստիճանով:	Չի պահանջվում: Փականի շահագործման ժամանակ այս տեղաշարժը չի ազդում փականի/ դիաֆրագմայի հերմետիկի վրա և չի ազդարարում խնդրի առկայության մասին:
Փակոցը չի տեղադրվում բոլորի վրա (խափանման ժամանակ փակվող շարժաբեր)	Շարժաբերի համար նախատեսված սեղմված օդ չկա	EnviZion-ի կցորդման եզակի մեթոդի շնորհիվ, ճնշակը և դիաֆրագման չեզոք դիրքի ետ քաշելու և շարժաբերը պատշաճ մոնտաժելու համար՝ պետք է օդ մատակարարվի խափանման դեպքում փակվող շարժաբերներին: ITT-ն խորհուրդ է տալիս օդային մուտքին 3-քայլանի գնդիկավոր փականի միացում կատարել, որը փակոցի տեղադրման աշխատանքների ժամանակ հնարավորություն կտա օդի ճնշումը տեղային կարգավորել:
Ձեռքի պտտանիվ/կափարիչ հատվածում խոչընդոտ փակոցի տեղադրման ժամանակ	Փակոցի տեղադրման ժամանակ նրա կափարիչը կարող է պտտվել ձեռքի պտտանիվի հետ միասին:	Ճիշտ տեղադրման համար հավաստիացեք, որ ձեռքի պտտանիվը բաց դիրքում է և չի խանգարում փակոցի կափարիչին: Լռելու դեպքում, բացեք ձեռքի պտտանիվը՝ խոչընդոտը վերացնելու համար:
Արտահոսք կորպուսից՝ երկարատև շահագործման ժամանակ	Դիաֆրագման սպառել է իր օգտակար գործողության ժամկետը կամ փականի իրանը վնասվել է հերմետիկի հատվածում:	<ul style="list-style-type: none"> <li>EnviZion. Փակոցի սևեռիչ կոճգամը նախատեսված է տեղադրման պատշաճ դիրքին հասնելիս տեղում փականում կատարելու համար: Այս դիրքն ապահովում է կորպուսի ճիշտ աշխատանքը դիաֆրագմայի շահագործման ողջ ընթացքում: Նման ֆունկցիան կարելի է անտեսել և լրացուցիչ ուժ գործադրել այն դեպքերում, երբ արտաքին հերմետիկից արտահոսք կա: Տեղադրեք փակոցի սևեռիչ կոճգամը երկարաձգված դիրքում և փոքր-ինչ պտտեք փակոցի կափարիչը ժամացույցի սլաքի ուղղությամբ: Պտտեք սևեռիչ կոճգամը՝ մինչև</li> </ul>

7.1 Անսարքությունների վերացում

Խնդիր	Պատճառ	Կարգավորում
		<p>հաջորդ ֆիքսված դիրքը: Սա միայն ժամանակավոր լուծում է. արտահոսքի խնդրի վերաբերյալ պետք է հայտնել տեխսպասարկմանը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• BioviZion/PFuZion. Դիաֆրագմայի ծառայության ժամկետը կարելի է ժամանակավոր երկարացնել՝ թուլացնելով կափարիչի պտուտակը, մասնակի ձգելով կափարիչը և կրկին ամուր ձգելով կափարիչի պտուտակը՝ տեղում փականելու նպատակով:</li> </ul>
Փակոցի կափարիչի արգելակներ (EnviZion)	EnviZion-ի փակոցի կափարիչն ունի ներքին արգելակներ, որոնք նախատեսված են բաց (CCW) ուղղությամբ կափարիչը չափիչ ավել պտտելը կանխարգելելու համար: Եթե չափից դուրս մեծ ուժ գործադրվի, ապա կմիանան ներքին արգելակները և կֆիքսեն կափարիչը բաց դիրքում:	Բարձրացրեք կափարիչը՝ ուժգին սեղմելով ժամացույցի սլաքի ուղղությամբ: Սա կհաղթահարի ներքին ֆիքսման ֆունկցիային, որը գործի է դրվում, երբ կափարիչ վրա ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ գործադրվում է չափից ավել ուժ:



# 8 Մասերի ցանկ և լայնակի հատումների գծագրեր

## 8.1 Մասերի ցանկ

Մասերի ցանկի համար դիմեք արտադրող գործարանին

# 9 Certifications

## 9.1 Համապատասխանության հայտարարագիր



**ԵՅ-Համապատասխանության հայտարարագիր** (Միայն օրինակ է: Ստորագրված է, կիրառելի բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին):

Սույնով մենք հայտարարում ենք, որ

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում,  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ հետևյալ սերիայի փականները՝

**Pure-Flo, EnviZion, BioviZion, Dia-Flo,**

համապատասխանում են ԵՅ-ի հետևյալ դիրեկտիվներին՝ պայմանով, որ շահագործման համար անհրաժեշտ տեղանքի պայմանները բավարարված լինեն, ինչպես նշված է ինժեներական փաստաթղթերում, մասնավորապես՝ շահագործման ձեռնարկում՝

**Սարքավորումներ - դիրեկտիվ (2006/42/EC)**

Եթե կիրառելի է (տե՛ս ապրանքի հետ առաքված վկայագրման փաթեթը), անհատական պատվերի հետ կհանձնվի համապատասխանության հետևյալ առանձին հայտարարագիրը՝

**EMC - դիրեկտիվ (2014/30/EU)**

**ATEX - դիրեկտիվ (2014/34/EU)**

**PED - դիրեկտիվ (2014/68/EU)**

Օգտագործված ներդաշնակեցված ստանդարտներ՝

- |   |
|---|
| <ul style="list-style-type: none"> <li>• EN 19</li> <li>• EN 12516-3</li> </ul> |
|---|

Տեխնիկական ֆայլը կազմելու համար լիազորված անձը՝ Մայք Սպաննուր – Որակի հարցերով մենեջեր

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>





**UKCA-Համապատասխանության հայտարարագիր** (Միայն օրինակ է: Ստորագրված է, կիրառելի բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին):

Սույնով մենք հայտարարում ենք, որ

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում,  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ հետևյալ սերիայի փականները՝

**Pure-Flo, EnviZion, BioviZion, Dia-Flo,**

համապատասխանում են ՄԹ-ի հետևյալ կանոնակարգերին՝ պայմանով, որ շահագործման համար անհրաժեշտ տեղանքի պայմանները բավարարված լինեն, ինչպես նշված է ինժեներական փաստաթղթերում, մասնավորապես՝ շահագործման ձեռնարկում՝

**Սարքավորումների մատակարարման (անվտանգության) 2 008 թվականի թիվ 1 597 կանոնակարգ**

Եթե կիրառելի է (տե՛ս ապրանքի հետ առաքված վկայագրման փաթեթը), անհատական պատվերի հետ կհանձնվի համապատասխանության հետևյալ առանձին հայտարարագիրը՝

Էլեկտրամագնիսական համատեղելիության 2 016 թվականի թիվ 1 091 կանոնակարգ

Սարքավորումներ և պաշտպանիչ համակարգեր, որոնք նախատեսված են պոտենցիալ պայթյունավտանգ մթնոլորտում կիրառելու համար՝ ըստ 2 016 թվականի թիվ 1 107 կանոնակարգերի

Ճնշման սարքավորումների (անվտանգության) 2 016 թվականի թիվ 1 005 կանոնակարգեր

Կիրառվող ստանդարտներ՝

- EN 19
- EN 12516-3

Տեխնիկական ֆայլը կազմելու համար լիազորված անձը՝

Ստեֆանո Պիրոն (Stefano Piron)

ITT Industries Limited

Norton House

Stewart Road

Basingstoke

Hampshire RG24 8NF

United Kingdom

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>



## 9.2 Միավորման հայտարարագիր



**ԵՅ-Միավորման հայտարարագիր-** (Միայն օրինակ է: Ստորագրված է, բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին)

համաձայն սարքավորումների 2006/42 դիրեկտիվի ԵՅ Չավելված II Բ-ի

c

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում,  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ ոչ ամբողջական սարքավորումները, միայն հաղորդակները, տեսակ՝

**Advantage 2,1, Advantage S33, ACS, Dia-Flo, ZA, ZB**

Չամապատասխանում են սարքավորումների (2006/42/EC) դիրեկտիվի Չավելված I, 1,1.2, 1,1.3, 1,1.5, 1,1.6, 1,2.1, 1,2.2, 1,2.3, 1,3.1, 1,3.2, 1,3.4, 1,3.7 և 1,3.9 հոդվածների հետևյալ հիմնական պահանջներին

Օգտագործված ներդաշնակեցված ստանդարտներ՝

- HY 19
- HY 12516-3

Գործարկումն արգելվում է, քանի դեռ չի հաստատվել, որ սարքավորումները, որոնցում պետք է տեղադրվեն վերը նշված սարքավորումները, համապատասխանում են սարքավորումների (2006/42/EC) դիրեկտիվին.

Նաև հայտարարում ենք, որ այս ոչ ամբողջական սարքավորման համապատասխան տեխնիկական փաստաթղթերը պատրաստվել են համաձայն VII Չավելվածի, Մաս Բ-ի և պարտավորվում ենք դրանց պատճենը տրամադրել շուկայի վերահսկողության մարմիններին՝ ըստ պահանջի:

Սույն փաստաթղթերի կազմման համար լիազորված է՝ Մայք Սպաննուօթը (Ռրակի կառավարման ղեկավար)

Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>



**UKCA-Միավորման հայտարարագիր-** (Միայն օրինակ է: Ստորագրված է, բնօրինակ հայտարարագիրը ներառված է փականի վկայագրման փաթեթում՝ այս շահագործման ձեռնարկից առանձին)

համաձայն սարքավորումների մատակարարման (անվտանգություն) 2 008 թվականի թիվ 1 597 կանոնակարգի II Բ հավելվածի

սույնով մենք հայտարարում ենք, որ

ITT Bornemann GmbH ընկերությունը, որը գտնվում է  
Postfach 11 62, 31 676 Obernkirchen, Germany հասցեում,  
Fon +49 (0) 5 724 390-0, Fax +49 (0) 5 724 390-290,

որ ոչ ամբողջական սարքավորումները, միայն շարժաբերները, տեսակ՝

**Advantage 2,1, Advantage S33, ACS, Dia-Flo, ZA, ZB**

Համապատասխանում են սարքավորումների մատակարարման (անվտանգություն) 2 008 թվականի թիվ 1 597 կանոնակարգի հետևյալ հիմնական պահանջներին՝ Հավելված I, 1,1.2, 1,1.3, 1,1.5, 1,1.6, 1,2.1, 1,2.2, 1,2.3, 1,3.1, 1,3.2, 1,3.4, 1,3.7 և 1,3.9 հոդվածներ

Կիրառվող ստանդարտներ՝

- HY 19
- HY 12516-3

Գործարկումն արգելվում է, քանի դեռ չի հաստատվել, որ հարմարանքները, որոնցում պետք է տեղադրվեն վերը նշված սարքավորումները, համապատասխանում են սարքավորումների ՄԹ 2008 թվականի թիվ 1597 կանոնակարգին:

Նաև հայտարարում ենք, որ այս ոչ ամբողջական սարքավորման համապատասխան տեխնիկական փաստաթղթերը պատրաստվել են համաձայն VII Հավելվածի, Մաս Բ-ի և պարտավորվում ենք դրանց պատճենը տրամադրել շուկայի վերահսկողության մարմիններին՝ ըստ պահանջի:

Սույն փաստաթղթերի կազմման համար լիազորված է՝

Ստեֆանո Պիրոն (Stefano Piron)  
ITT սահմանափակ արդյունաբերություն  
Norton house  
Ստյուարտ Ռոուդ  
Բեյսինգսթոք  
Hampshire RG24 8NF  
Միացյալ Թագավորություն  
Obernkirchen, ամսաթիվ՝

Գլխավոր տնօրեն

Տեխնիկական տնօրեն

05/2022, վեր. 01

<http://www.bornemann.com>



Այս փաստաթղթի ամենավերջին  
տարբերակը տեսնելու և մանրամասն  
տեղեկատվության համար այցելե՛ք մեր  
կայքէջը.

<http://www.engvalves.com>



**ITT**

ITT Engineered Valves  
33 Centerville Road  
Lancaster, PA 17603  
USA

**Ձև IOM.ENVBV.hy-am.2023-01**

©2023 ITT Inc. ընկերություն կամ նրա լիարժեք սեփականությունը հանդիսացող մասնաճյուղեր  
Բնօրինակ ցուցումները ներկայացված են անգլերեն լեզվով: Բոլոր ոչ անգլերեն տարբերակները համարվում են թարգմանություն  
ընթացակարգ: